ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 129

ք. Երևան 02 .08.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մարզական գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-33/1» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) /ՀՎՀՀ՝ 00500605, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Երևան, Արցախի պողոտա 42շ., 33 շինություն:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և Ընթացակարգի 11-րդ, 14-րդ, 16-րդ, 19-րդ և 29-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից:

Սակայն, համաձայն ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 25.06.2024թ N Ե/1520-24 գրության՝ համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի, «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի իրական շահառու, 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն է հանդիսանում Արման Մանժուրի Գրիգորյանը:

Ծառայության հասանելի տեղեկատվական համակարգերում, տվյալների շտեմարաններում և տեղեկագրում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Արմտեքստիլ» ՍՊԸ-ն 2024 թվականի մարտի 23-ից 2026 թվականի մարտի 23-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արման Մանժուրի Գրիգորյանի և «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն Արման Մանժուրի Գրիգորյանը հանդիսանում է «Արմտեքստիլ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն:

Այսինքն՝ Ընկերության և «Արմտեքստիլ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, որի համաձայն գնահատող հանձնաժողովի 27.06.2024թ-ի 1.1. որոշմամբ մերժվել է «ԱՐՄՖՈՐՍ» ՍՊԸ-ի հայտը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ